**Արձանագրություն**

( հանդիպումը կայացել է 2024թ. փետրվարի 23-ին)

Հանդիպմանը մասնակցում էին Արմավիրի մարզի «Մայիսյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ծնողական խորհրդի 12 անդամներից 11-ը, բացակա՝ 1-ը:

Օրակարգում՝

1. Օրակարգի հաստատում:

(զեկ.՝ Ա.Զաքարյան)

2. «Մայիսյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2024-2028 թվականների թվականների դպրոցի զարգացման ծրագիրը կազմելու առաջարկությունների քննարկում:

(զեկ.՝ Ա.Սարուխանյան)

Օրակարգում՝

1.Լսեցին-Ա.Զաքարյանը ներկայացրեց օրակարգը:

Որոշում է

Ընդունել միաձայն:

Օրակարգում՝

Լսեցին-2.Դպրոցի տնօրեն Ա.Սարուխանյանի տեղեկատվությունը «Մայիսյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2024-2028 թվականների դպրոցի զարգացման ծրագրի կազմման վերաբերյալ: Նա մասնավորապես նշեց, որ իր պաշտոնավարման 5 տարին լրանալու կապակցությամբ հայտարարվել է դպրոցի տնօրենի մրցույթ, և ինքը՝ որպես մրցույթին մասնակցող հավակնորդ, համաձայն ՀՀ կառավարության 2023թ. փետրվարի 9-ի N 181-Ն որոշման և ԿԳՄՍ նախարարի 2022թ. սեպտեմբերի 22-ի N35-Ն հրամանի՝ նախաձեռնել է հանդիպումը՝ ծնողների առաջարկությունները հաշվի առնելու և 2024-2028 թվականների դպրոցի զարգացման ծրագրում դրանք ընդգրկելու համար:

Ծնողական խորհրդի նախագահ Ալիսա Զաքարյանը նշեց, որ իրենք շատ հավանում են այն, որ դպրոցում միջոցառումները շատ են: Աշակերտների և ծնողների շրջանում մեծ ոգևորություն է առաջացրել նաև խմբակների գործունեությունը: Նա առաջարկեց խմբակների, միջոցառումների, արտադպրոցական ուսուցողական էքսկուրսիաների թիվն ավելացնել: ԾԽ անդամ Գայանե Մերգևոսյանն առաջարկեց հուշագիր կնքել ուրիշ դպրոցների

հետ, համագործակցել՝ կազմակերպելով միջդպրոցական վիկտորինաներ, մրցույթներ: 8-րդ դասարանի ԾԽ նախագահ Նարինե Քոչարյանն առաջարկեց վերանորոգել և արդիականացնել հանդիսությունների դահլիճը և մարզադահլիճը:

Ծնողական խորհուրդը, լսելով տնօրենի տեղեկատվությունը և քննարկելով առաջարկությունները,

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Խնդրել դպրոցի տնօրենի հավակնորդ Ա.Սարուխանյանին ծնողների առաջարկությունները հաշվի առնել «Մայիսյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2024-2028 թվականների դպրոցի զարգացման ծրագիրը կազմելիս:
2. Առաջարկել Ա.Սարուխանյանին վերընտրվելու դեպքում միջոցներ ձեռնարկել դպրոցի հանդիսությունների և մարզական դահլիճները վերանորոգելու ուղղությամբ:

Դպրոցի ծնողական խորհրդի նախագահ՝ Ա.Զաքարյան

քարտուղար՝ Ա.Մարգարյան